

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ



ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ
ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2020
ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԻՆՆ ԱՄԻՍՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Բովանդակություն

ՆԵՐԱԾԱԿԱՆ ՄԱՍ	2
ԱՄՓՈՓԱԳԻՐ.....	5
ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՕՐՅԵԿՏԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	8
ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ	11
I. ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ	12
1.1 Միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների պահպանման և անվտանգ երթևեկության ծառայություններ	12
1.2 Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող Մ6 Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման միջպետական նշանակության ճանապարհի կառուցում և հիմնանորոգում ծրագիր.	15
1.3. Հիմնական ընդհանուր հանրակրթություն.....	17
1.4. Երևան քաղաքի փողոցների արտաքին լուսավորության ծառայություններ	17
1.5. Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող Գյումրու քաղաքային ճանապարհների ծրագիր	19
1.6. Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող Գյումրու քաղաքային ճանապարհների դրամաշնորհային ծրագիր (Տրանշ Ա, Բ) 19	
1.7. Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող քաղաքային ենթակառուցվածքների և քաղաքի կայուն զարգացման ներդրումային երկրորդ ծրագրի շրջանակներում ճանապարհային շինարարություն	20
II. ԽԵՂԱԹՅՈՒՐՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ.....	22
III. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՄԲ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԱՅԼ ՓԱՍՏԵՐ.....	26
«ՀԵՏՀՍԿՈՂԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ»	27
ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	30

ՆԵՐԱԾԱԿԱՆ ՄԱՍ

Հաշվեքննության հիմքը

ՀՀ հաշվեքննիչ պալատի 2020 թվականի նոյեմբերի 20-ի թիվ 178-Ա որոշում:

Հաշվեքննության օբյեկտը

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն:

Հաշվեքննության առարկան

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունում 2020 թվականի ինն ամիսների պետական բյուջեի մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեություն:

Հաշվեքննության ընթացակարգը

Հարցում, արտաքին հաստատում, վերլուծական ընթացակարգ, վերահաշվարկ, վերակատարում:

Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը

2020 թվականի հունվարի 1-ից մինչև 2020 թվականի սեպտեմբերի 30-ը:

Հաշվեքննության կատարման ժամկետը

2020 թվականի նոյեմբերի 27-ից մինչև 2021 թվականի փետրվարի 26-ը:

Հաշվեքննության կասեցում

2020 թվականի դեկտեմբերի 3-ի թիվ 205-Ա որոշում:

Հաշվեքննության վերսկսում

2020 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 248-Ա որոշում:

Հաշվեքննության մեթոդաբանությունը

Հաշվեքննությունն իրականացվել է «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի և ՀՀ պետական բյուջեի երեք, վեց, ինն ամիսների և տարեկան կատարման հաշվեքննության ուղեցույցի համաձայն, Հաշվեքննիչ պալատի ֆինանսական և համապատասխանության հաշվեքննության մեթոդաբանություններ համաձայն:

Իրականացվել է ֆինանսական և համապատասխանության հաշվեքննություն, որի ընթացքում կիրառվել են հարցում, արտաքին հաստատում, վերլուծական ընթացակարգ, վերահաշվարկ, վերակատարում ընթացակարգերը:

Հաշվեքննության չափանիշները

1. «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենք,
2. «ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ

օրենք

3. «Գնումների մասին» ՀՀ օրենք,

4. «Ավտոմոբիլային ճանապարհների մասին» ՀՀ օրենք

5. ՀՀ կառավարության 2014 թվականի փետրվարի 13-ի «ՀՀ կառավարության որոշումը ՀՀ ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհների անվանացանկը հաստատելու, ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհների պետական կառավարման մարմին սահմանելու, ՀՀ կառավարության 2008 թվականի հունվարի 10-ի N 112-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 265-Ն որոշում,

6. ՀՀ կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 04-ի «ՀՀ ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման մակարդակների գնահատման ու կատարված աշխատանքների ընդունման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2004 թվականի դեկտեմբերի 9-ի N 1942-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1419-Ն որոշում,

7. ՀՀ կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի «ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» թիվ 1919-Ն որոշում,

8. ՀՀ կառավարության 2018 թվականի հունիսի 15-ի «Բյուջեների կատարման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 706-Ն որոշում,

9. ՀՀ կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի «ՀՀ պետական բյուջեից իրավաբանական անձանց սուբսիդիաների և դրամաշնորհների հատկացման կարգը հաստատելու մասին» թիվ 1937-Ն որոշում,

10. Պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման

**Հաշվեքննություն
իրականացրած
կառուցվածքային
ստորաբաժանում**

մասին պայմանագրեր և այլն:

Հաշվեքննությունն իրականացվել է ՀՀ հաշվեքննիչ պալատի հինգերորդ վարչության կողմից, որի աշխատանքները համակարգում է հաշվեքննիչ պալատի անդամ Դ. Չիբուխյանը :

ԱՄՓՈՓԱԳԻՐ

1049-11001 Միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների պահպանման և անվտանգ երթևեկության ծառայությունների հետ կապված առկա են “Ավտոմոբիլային ճանապարհների մասին” ՀՀ օրենքի պահանջներին առնչվող անհամապատասխանություններ և խեղաթյուրումներ:

ՀՀ կառավարության 13.02.2014թ.-ին թիվ 265-Ն որոշմամբ հաստատված ցանկում Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային որոշ ճանապարհների ըստ նշանակության դասակարգումը չի համապատասխանում “Ավտոմոբիլային ճանապարհների մասին” ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 6-րդ, 7-րդ, 8-րդ և 9-րդ կետերով սահմանված պահանջներին: Մասնավորապես

Որպես միջպետական նշանակության ավտոճանապարհներ դասակարգված ավտոճանապարհներից 387 կմ ավտոճանապարհները հանդիսանում են հանրապետական նշանակության ճանապարհներ և դրանց պահպանման աշխատանքների համար կատարողականներով հաշվարկված գները գերազանցում են, որպես հանրապետական նշանակության ավտոճանապարհների պայմանագրային գները 75,912.8 հազ. դրամով /1-ին կիսամյակ 55,730.4 հազ. դրամ/:

167,8 կմ ավտոճանապարհներ հանդիսանում են տեղական նշանակության ճանապարհներ, որոնց պետական ճանապարհային մարմինը տնօրինման մասով ոչ թե ՀՀ տարածքային կառավարման և ենթակոռուցվածքների նախարարությունն է այլ ՀՀ մարզպետներն են: Նշված ճանապարհները սպասարկվել է, որպես միջպետական ճանապարհներ, որոնց սպասարկման համար հաշվարկվել է 191,881.90 հազ. դրամ: Նշված ավտոճանապարհների պահպանման աշխատանքների համար կատարողականներով հաշվարկված գները գերազանցում են որպես տեղական նշանակության ավտոճանապարհների համար առաջարկված պայմանագրային գները 60,485.00 հազ. դրամով /1-ին կիսամյակ 37,982.30 հազ. դրամ/:

34,5 կմ երկաթուղային ճանապարհներ, որոնց պահպանման համար 9 ամսվա ընթացքում վճարվել է 14,337.60 հազ. դրամ/ 1-ին կիսամյակ 10,594.70 հազ.դրամ/ հանդիսանում են դաշտամիջյան ճանապարհներ, որոնց պահպանման աշխատանքներ ՀՀ օրենսդրությամբ չի նախատեսվում և չի իրականացվում:

Որպես հանրապետական նշանակության ավտոճանապարհներ դասակարգված ավտոճանապարհներից 569,3 կմ ճանապարհները հանդիսանում են մարզային նշանակության ավտոճանապարհներ, որոնց պահպանության համար

2020 թվականի 9ամիսների կատարողականներով հաշվարկվել է 578,184.90 հազ.դրամ /1-ին կիսամյակ 372,168.90 հազ. դրամ/:

58,7 կիլոմետրը դաշտամիջյան ճանապարհներ են, որոնցից 37,1 կմ երկարությամբ ճանապարհահատվածների պահպանության համար /3-րդ եռամսյակ 28.7 կմ / 2020թվականի 9 ամսվա կատարողականներով հաշվարկվել է 37,304.00 հազ. դրամ /1-ին կիսամյակ 23,522.50 հազ. դրամ/, այնինչ ՀՀ օրենսդրությամբ այդ ճանապարհների պահպանություն չի նախատեսվում:

7.6 կիլոմետրը քաղաքի փողոց է, որի պահպանության համար 2020թվականի 9 ամիսների կատարողականներով հաշվարկվել է 8,204.900 հազ. դրամ / 1-ին կիսամյակ 5,334.9 հազ. դրամ/:

ՀՀ կառավարության 13.02.2014թ.-ին թիվ 265-Ն որոշման 4-րդ կետի 2)-րդ մասի համաձայն Կապան, Իջևան և Արմավիր քաղաքների տարածքներում գտնվող՝ Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների մաս հանդիսացող հատվածների միայն երթևեկելի մասի ծածկի ընթացիկ նորոգման և ձմեռային պահպանության աշխատանքներն են իրականացվում Հայաստանի Հանրապետության տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության կողմից, այնինչ կատարողականներով հաշվարկվել է ամբողջ ճանապարհածածկույթի համար, ինչի արդյունքում 2020թվականի 9 ամիսների ընթացքում ավել է հաշվարկվել 11,249.90 հազ. դրամ/ 1-ին կիսամյակ 6,982.00 հազ. դրամ/:

2020 թվականի համար “Հայաստանի Հանրապետության միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների պահպանում և անվտանգ երթևեկության ծառայություններ” ծրագրով համաձայնագրերը կապալառու կազմակերպությունների հետ կնքվել են 2020թ. փետրվարին, այսինքն 2020 թվականի հունվար ամսին պահպանում իրականացնող ընկերությունները պահպանում են իրականացրել չունենալով չափորոշիչներ, թե ինչ մակարդակի պահպանություն պետք է իրականացնեն, իսկ պատվիրատուն ընդունել է այդ աշխատանքների կատարման համար կատարողականները և փաստաթղթավորել, որ պահպանության ընթացքում ապահովվել են սահմանված չափանիշները՝ չունենալով այդ չափանիշները:

1049-21004 “Մ6 Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման միջպետական նշանակության ճանապարհի կառուցում և հիմնանորոգում ծրագրում առկա են անհամապատասխանություններ:

Ծրագրի սկզբից մինչև 30.09.2020թվականը ներառյալ նախատեսված 13,334,818.4 հազ. դրամ աշխատանքի դիմաց իրականացվել է ընդամենը

3,836,646.4 հազ. դրամի կառուցման և հիմնանորոգման աշխատանքներ, կամ 28,77 տոկոս, որի դիմաց վճարվել է 6,025,369.1 հազ. դրամ:

2020 թվականի առաջին կիսամյակում Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող “Մ6 Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման միջպետական նշանակության ճանապարհի կառուցում և հիմնանորոգում ծրագրի փաստացի ծախսը “Բյուջետային ծախսերի և բյուջետային պարտքերի” հաշվետվությունում, որպես փաստացի կատարված ծախս, պակաս է ցույց տրվել 120,187.20 հազ. դրամով:

1146-11002 Հիմնական ընդհանուր հանրակրթություն

Հիմնական ընդհանուր հանրակրթության ծրագրով գիտելիքների գնահատման համար նախատեսվել է 13 բալային համակարգ ՀՀ –ում գործող գիտելիքների գնահատման 10 բալային համակարգի փոխարեն:

Հաշվեքննությամբ հայտնաբերվել են էական անհամապատասխանություններ, որոնք ներկայացված են սույն ընթացիկ եզրակացության 14 կետերում, համատարած չեն սակայն միասին վերցրած էական են ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության 2020 թվականի պետական բյուջեի ինն ամիսների կատարման վերաբերյալ հաշվետվության համար:

Հաշվեքննությամբ հայտնաբերվել է խեղաթյուրումներ, որոնք ներկայացված են սույն ընթացիկ եզրակացության 1.1 կետում, խեղաթյուրումները համատարած չեն:

^[1] Հաշվեքննչ պալատի մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն հաշվեքննության արդյունքներն արձանագրվել և ներկայացվել է հաշվեքննության օբյեկտի ղեկավարին. որը հաշվեքննության արձանագրությունն ստանալուն հաջորդող 10 օրվա ընթացքում համաձայնության դեպքում ստորագրում է այն կամ գրավոր ներկայացնում է առարկություններ և բացատրություններ: Հաշվեքննության օբյեկտի կողմից արձագանք չի եղել:

Դավիթ Զիբուխյան

ՀՀ հաշվեքննիչ պալատի անդամ

26 փետրվարի 2021 թվական

ՀՀ հաշվեքննիչ պալատ,

Բաղրամյան փող. 19, ք. Երևան,

Հայաստանի Հանրապետություն

ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

2020 թվականի ինն ամիս

Աղյուսակ 1

հազ. դրամ

	Միջոցառում	Հոդված	Հոդվածի անվանում	Տարեկան ճշտված պլան	Հաշվետու ժամանակա- հատվածի ճշտված պլան	Փաստ	Փաստացի ծախս
1	Միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների պահպանման և անվտանգ երթևեկության ծառայություններ	425100	Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում	10,572,749.30	8,806,835.00	6,496,005.40	6,496,005.40
2	Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող Մ6 Վանաձոր-Ալավերդի- Վրաստանի սահման միջպետական նշանակության ճանապարհի ծրագրի կառուցում և հիմնանորոգում	511300	Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	12,872,282.90	11,231,447.70	1,802,975.70	2,143,668.70
3	Տարրական ընդհանուր հանրակրթություն	451100	Սուբսիդիաներ ոչ ֆինանսական պետական կազմակերպություններին	30,464,532.80	23,579,083.80	22,724,309.60	22,724,309.60
4	Հիմնական ընդհանուր հանրակրթություն	451100	Սուբսիդիաներ ոչ ֆինանսական պետական կազմակերպություններին	39,994,132.50	30,954,769.30	29,807,700.90	29,807,700.90

	Միջոցառում	Հոդված	Հոդվածի անվանում	Տարեկան ճշտված պլան	Հաշվետու ժամանակա- հատվածի ճշտված պլան	Փաստ	Փաստացի ծախս
5	Երևան քաղաքի փողոցների արտաքին լուսավորության ծառայություններ	463200	Ընթացիկ սուբվենցիաներ համայնքներին	2,124,862.30	1,455,880.70	1,455,880.70	1,455,880.70
6	Երևանի մետրոպոլիտեն ովուլնորափոխադրման ծառայությունների գծով պետության կողմից համայնքի ղեկավարին պատվիրակված լիազորությունների իրականացում	451100	Սուբսիդիաներ ոչ ֆինանսական պետական կազմակերպություններին	2,801,071.00	1,934,348.00	1,934,348.00	1,934,348.00
7	Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող Գյումրու քաղաքային ճանապարհների ծրագիր	511300	Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	6,552,975.60	5,197,793.30	1,358,827.00	1,358,827.00
8	Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող Գյումրու քաղաքային ճանապարհների դրամաշնորհային ծրագիր (ՏրանշԱ, Բ)	511200	Շենքերի և շինությունների շինարարություն	2,263,116.60	1,810,493.40	574,390.50	574,390.50
9	Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող քաղաքային ենթակառուցվածքների և քաղաքի կայուն զարգացման ներդրումային երկրորդ ծրագրի շրջանակներում ճանապարհային շինարարություն	511200	Շենքերի և շինությունների շինարարություն	9,233,794.80	8,025,968.70	2,286,429.40	3,515,494.20

	Միջոցառում	Հոդված	Հոդվածի անվանում	Տարեկան ճշտված պլան	Հաշվետու Ժամանակա- հատվածի ճշտված պլան	Փաստ	Փաստացի ծախս
10	Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող դպրոցների սեյսմիկ պաշտպանության ծրագրի ըջանակներում ՀՀ դպրոցների սեյսմիկ անվտանգության բարելավմանն ուղղված միջոցառումներ	511200	Շենքերի և շինությունների շինարարություն	8,640,245.20	5,499,667.10	2,652,866.30	2,652,866.30
				125,519,763.00	98,496,287.00	71,093,733.40	72,663,491.30

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ՊԸՊ	Պայմանագրի ընդհանուր պայման
ՀՏԶՀ	Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ
ԱԶԲ	Ասիական զարգացմա բանկ
ՊՀՊ	Պայմանագրի հատուկ պայման

I. ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ

1.1 Միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների պահպանման և անվտանգ երթևեկության ծառայություններ

1.1.1. 2020 թվականի 9 ամիսների ընթացքում նախարարության կողմից պակաս է իրականացվել ՀՀ պետական բյուջեի ճշտված պլանով նախատեսված ճանապարհների ձմեռային պահպանման և ընթացիկ ամառային պահպանման աշխատանքները:

2020 թվականի ճշտված պլանով՝ նախատեսվել է իրականացնել 3477.6 կմ ընդհանուր երկարությամբ ավտոճանապարհների ձմեռային պահպանման և 3002.5 կմ ընթացիկ ամառային պահպանման աշխատանքներ, սակայն կնքված համաձայնագրերով 2020թ. նախատեսվել է իրականացնել ձմեռային պահպանման աշխատանքներ 3336.94 կմ ճանապարհների վրա, ընթացիկ ամառային պահպանման աշխատանքներ՝ 2889.2 կմ ճանապարհների վրա, կամ պակաս է կատարվել համապատասխանաբար՝ 140.7 կմ-ով և 113.3 կմ-ով:

Կնքված համաձայնագրերի համաձայն՝ 2020 թվականի 9 ամիսների ընթացքում նախատեսվել է իրականացնել միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման աշխատանքներ 3,944,025.90 հազ. դրամ գումարի չափով, կատարողականը կազմել է 3,858,758.30 հազ. դրամ, տարբերությունը կազմել է 85,267.60 հազ. դրամ: 2020թ. 9 ամսվա վճարման ժամանակացույցով նախատեսվել է վճարել 3,524,839.10 հազ. դրամ, փաստացի վճարումը կազմել է 3,458,728.10 հազ. դրամ, կամ 66,111.00 հազ. դրամով պակաս (հավելված 1) :

1.1.2. ՀՀ կառավարության 13.02.2014թ. թիվ 265-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհների ցանկի որոշ ճանապարհների դասակարգումը ըստ նշանակության չի համապատասխանում «Ավտոմոբիլային ճանապարհների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 6-րդ, 7-րդ, 8-րդ և 9-րդ կետերով սահմանված պահանջներին:

«Ավտոմոբիլային ճանապարհների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 6-րդ, 7-րդ, 8-րդ և 9-րդ կետերով սահմանված պահանջների համաձայն միջպետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհներ են հանդիսանում այն ճանապարհները, որոնք կապում են Հայաստանի Հանրապետության ճանապարհային ցանցը այլ պետությունների ավտոմոբիլային ճանապարհների ցանցին և ապահովում են միջազգային տրանսպորտային հաղորդակցություն,

ինչպես նաև խոշոր բնակավայրերի, օդանավակայանների, պատմական հուշարձանների, լեռնանցքների մոտեցումներն ու շրջանցները և տրանսպորտային հանգույցները, որոնք չունեն առանձին պայմանանիշ:

Հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհներ են հանդիսանում այն ճանապարհները, որոնք կապում են հանրապետության քաղաքները մայրաքաղաքին և միմյանց, մշակույթային, հոգևոր կենտրոնների և միջպետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների հետ, խոշոր բնակավայրերի, օդանավակայանների, պատմական հուշարձանների, լեռնանցքների մոտեցումներն ու շրջանցները, ինչպես նաև՝ տրանսպորտային հանգույցները որոնք չունեն առանձին պայմանանիշ, իսկ մարզային (տեղական) նշանակության ավտոմոբիլային ճանապարհները կապում են հանրապետության գյուղական բնակավայրերը միմյանց, այլ քաղաքների, հանրապետական և միջպետական նշանակության ճանապարհների հետ:

Որպես միջպետական նշանակության ավտոճանապարհներ դասակարգված ավտոճանապարհներից

➤ 387 կմ ավտոճանապարհները հանդիսանում են հանրապետական նշանակության ճանապարհներ (կապում են ՀՀ ճանապարհային ցանցը այլ պետությունների ավտոմոբիլային ճանապարհների ցանցին, սակայն չեն ապահովում միջազգային տրանսպորտային հաղորդակցություն, հանրապետության քաղաքները մայրաքաղաքին, միմյանց և միջպետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհներին: Նշված ավտոճանապարհներից 1-ին եռամսյակում ձմեռային պահպանությունում ներառվել են 319.1 կմ ավտոճանապարհներ, իսկ 2-րդ և 3-րդ եռամսյակում ամառային պահպանությունում 289,94 կմ ավտոճանապարհներ:

➤ 167,8 կմ ավտոճանապարհներ հանդիսանում են տեղական նշանակության ճանապարհներ (կապում են հանրապետության գյուղական բնակավայրերը միմյանց, այլ քաղաքների, հանրապետական և միջպետական նշանակության ճանապարհներին): Նշված ավտոճանապարհներից 1-ին եռամսյակում սպասարկվել են 130,5 կմ, իսկ 2-րդ և 3-րդ եռամսյակում՝ 125,8 կմ երկարությամբ ճանապարհներ:

➤ 34,5 կմ երկարությամբ ճանապարհներ հանդիսանում են դաշտամիջան ճանապարհներ, որոնց պահպանման աշխատանքներ ՀՀ օրանսդրությամբ չի նախատեսվում և չի իրականացվում:

✓ Որպես հանրապետական նշանակության ավտոճանապարհներ դասակարգված ավտոճանապարհներից

➤ 569,3 կմ ճանապարհները հանդիսանում են մարզային նշանակության ավտոճանապարհներ, որից 1-ին եռամսյակում պահպանություն է իրականացվել

492,1 կմ-ի, իսկ 2-րդ և 3-րդ եռամսյակներում 440,6 կմ երկարությամբ ճանապարհահատվածների վրա:

➤ 58,7 կմ-ն դաշտամիջյան ճանապարհներ են: Այս ճանապարհներից 1-ին եռամսյակում պահպանման է հանձնվել 37,1 կմ, իսկ իսկ 2-րդ և 3-րդ եռամսյակում 28,7 կմ երկարությամբ ճանապարհահատվածներ:

➤ 7.6 կմ-ն Հրազդան քաղաքի փողոց է:

➤ 24.4 կմ-ը միջպետական նշանակության ավտոճանապարհ է:

1.1.3. ՀՀ ընդհանուր օգտագործման միջպետական և հանրառապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների վրա գտնվող մետաղական արգելափակոցների պահպանման և վնասված հատվածների վերականգնման ծրագրով, 2020 թվականի 9 ամսվա համար նախատեսված աշխատանքները իրականացվել է ծրագրով նախատեսված չափից 29,871.50 հազ. դրամով պակաս:

2020 թվականի 9 ամսվա ՀՀ ընդհանուր օգտագործման միջպետական և հանրառապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների վրա գտնվող մետաղական արգելափակոցների պահպանման և վնասված հատվածների վերականգնման ծրագրով նախատեսվել է իրականացնել 730,526.1 հազ. դրամի աշխատանքներ, կատարողականը կազմել է 700,654.60 հազ. դրամ, կամ ծրագրով նախատեսված աշխատանքները նախատեսվածից պակաս է իրականացվել 29,871.50 հազ. դրամով: 2020թ. 9 ամսվա վճարման ժամանակացույցով նախատեսվել է 661,532.00 հազ. դրամի վճարում, փաստացի վճարումը կազմել է 624,665.60 հազ. դրամ, կամ 36,866.40 հազ. դրամով պակաս (հավելված 9)

1.1.4. ՀՀ ընդհանուր օգտագործման միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների վրա 2020թվականի 9 ամիսների ընթացքում իրականացվել է ծրագրով նախատեսված 29,199.90 հազ. դրամով պակաս նշագծման աշխատանքներ,

2020թվականի 9 ամսում ՀՀ ընդհանուր օգտագործման միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների վրա ծրագրով նախատեսվել է իրականացնել 477,929.00 հազ. դրամի նշագծման աշխատանքներ, փաստացի կատարողականը կազմել է 448,729.10 հազ. դրամ, տարբերությունը կազմել է 29,199.90 հազ. դրամ: 2020թ. 9 ամսվա վճարման ժամանակացույցով նախատեսվել է վճարել 477,929.00 հազ. դրամ, փաստացի վճարումը կազմել է 448,729.10 հազ. դրամ, կամ պակաս է վճարվել 29,199.90 հազ. դրամ (հավելված 10):

2020թ.-ի կնքված համաձայնագրերով 1 քմ նշագծման աշխատանքների պայմանագրային գները չեն փոփոխվել, սակայն 1 քմ նշագծման աշխատանքների արժեքները, ըստ մարզերի, էականորեն տարբերվում են: Այսպես, եթե Արագածոտնի, Արարատի, Արմավիրի և Կոտայքի մազերում նշագծման

աշխատանքների միավոր արժեքը (1 քմ) կազմում է 0.88 հազ. դրամ, ապա մնացած մարզերում 1.145-1.150 հազ. դրամ, կամ 30.7 %-ով ավելի:

1.1.5. Կապալառուների կողմից 2019 թվականի հունվար ամսին Հայաստանի Հանրապետության միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների պահպանում և անվտանգ երթևեկության ծառայություններ են մատուցել առանց հաստատված չափորոշիչների:

2020 թվականի համար «Հայաստանի Հանրապետության միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների պահպանում և անվտանգ երթևեկության ծառայություններ» ծրագրով համաձայնագրերը կապալառու կազմակերպությունների հետ կնքվել են 2020թ. փետրվարին, այսինքն՝ 2020 թվականի հունվար ամսին, պահպանում իրականացնող ընկերությունները պահպանում են իրականացրել չունենալով չափորոշիչներ, թե ինչ մակարդակի պահպանություն պետք է իրականացնեն, իսկ պատվիրատուն ընդունել է այդ աշխատանքների կատարման համար կատարողականները և փաստաթղթավորելով, որ պահպանության ընթացքում ապահովվել են սահմանված չափանիշները՝ չունենալով այդ չափանիշները:

Հաշվեքննվող օբյեկտի կողմից արձագանք չի եղել

1.2 Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող Մ6 Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման միջպետական նշանակության ճանապարհի կառուցում և հիմնանորոգում ծրագիր.

1.2.1. Հաշվետու ժամանակաշրջանի ճշտված պլանով» հունվար-սեպտեմբեր ամիսներին Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող Մ6 Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման միջպետական նշանակության ճանապարհի կառուցում և հիմնանորոգում ծրագրով կատարել է նախատեսվածից պակաս աշխատանքներ:

«Հայաստանի Հանրապետության 2020 թվականի ինն ամիսների պետական բյուջեի ելքային ծրագրերի և միջոցառումների գծով արդյունքային (կատարողական) ցուցանիշների կատարման վերաբերյալ» հավելվածի համաձայն՝ Հաշվետու ժամանակաշրջանի ճշտված պլանով» հունվար-սեպտեմբեր ամիսներին Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող Մ6 Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման միջպետական նշանակության ճանապարհի կառուցում և հիմնանորոգում ծրագրով նախատեսվել է կատարել 11,231,447.00 հազ. դրամի աշխատանքներ /1-ին կիսամյակ՝ 7,672,600.00 հազ. դրամ, փաստացի կատարվել է 2,143,668.70 հազ. դրամի աշխատանքներ, կամ նախատեսված աշխատանքներից պակաս է կատարվել 9,087,779.00 հազ. դրամով:

ՀՀ պետական բյուջեից նախարարությանը ծրագրի համար 2020թվաանի ինն ամիսների ճշտված պլանով նախատեսվել է հատկացնել 11,231,447.00 հազ.դրամ /1-ին կիսամյակ 7,672,600.00 հազ.դրամ/, որի դրամարկղային ծախսը կազմել է 1,802,975.00 հազ. դրամ /1-ին կիսամյակ 636,406.30 հազ. դրամ/, փաստացի ծախսը 2,143,668.70 հազ. դրամ /1-ին կիսամյակ 797,566.10 հազ. դրամ/ :

Մ6 Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման միջպետական նշանակության ճանապարհի կառուցում և հիմնանորոգում» ծրագրի շրջանակներում կնքվել է 3 պայմանագիր՝ «Ա.Ա.Բ. ՊՐՈԵԿՏ» ՍՊԸ և Բլաք ՍԻ Գրուփ ՀԶ-ի հետ (պայմանագրի CW-ICB-M6/2016-2) գումարով 2,865,222.90 հազ. դրամ, «Սուարդի» ԲԸ հայաստանյան մասնաճյուղի հետ (CW-ICB-M6/2016-3)՝ 4,719,096.20 հազ. դրամ գումարով, և «Հորիզոն-95» ՍՊԸ ու «Օբերոսլեր Կավ Պիետրոս» ընկերության հետ (CW-ICB-M6/2016-1)՝ 4,876,787.40 հազ. դրամ գումարով: Պայմանագրերը կնքվել են 2017 թվականի նոյեմբերի 30-ին, իսկ աշխատանքների ավարտ է սահմանվել 2020 թվականի նոյեմբերի 14-ը:

Ծրագրի սկզբից մինչև 30.09.2020 թվականը ներառյալ նախատեսված 13,334,818.40 հազ. դրամ աշխատանքի դիմաց իրականացվել է ընդամենը 3,836,646.40՝ հազ. դրամի կառուցման և հիմնանորոգման աշխատանքներ, կամ **28,77 տոկոս**

1.2.2. 2020 թվականի 9 ամիսների համար նախարարության կողմից տրամադրվել է իրարամերժ տեղեկատվություն:

Ծրագրի շրջանակում խորհրդատվական ծառայությունների՝ «Տեխնիկական վերահսկողության» ծառայությունների մատուցման համար, 03.04.2018 թվականին 42 ամիս ժամկետով, 4,038.6 հազ. ԱՄՆ դոլար արժեքով /այդ թվում՝ ԱԱՀ/ պայմանագիր է կնքել «Սաֆեջ» Բաժնետիրական ընկերության հետ:

Ըստ ներկայացրած տեղեկատվության՝ 2020 թվականի ինն ամիսների ընթացքում ընկերության կողմից մատուցվել է 503,8 հազ. ԱՄՆ դոլարի ծառայություններ /1-ին կիսամյակ՝ 242,8 հազ. ԱՄՆ դոլար/, որի դիմաց վճարվել է 329,7 հազ. ԱՄՆ դոլար / 1-ին կիսամյակ՝ 362.2 հազ. ԱՄՆ դոլար/:

Ըստ նախարարության կողմից 1-ին կիսամյակի համար տրամադրված տեղեկատվության՝ ծրագրի սկզբից մինչև 30.06.2020թ. ներառյալ մատուցվել է 1,934.4 հազ. ԱՄՆ դոլարի ծառայություններ, որի դիմաց վճարվել է 1,934,1 հազ. ԱՄՆ դոլար, 2020 թվականի ինն ամիսների համար ներկայացրած տեղեկատվության մեջ ծրագրի սկզբից մինչև 30.06.2020 թվականը ներառյալ ժամանակահատվածի համար մատուցած ծառայությունների գումարը ցույց է տվել 1,611.7 հազ. ԱՄՆ դոլար, իսկ դրա դիմաց կատարված վճարումը՝ 1,577.6 հազ. ԱՄՆ դոլար:

1.2.3. Նախարարության կողմից 2020 թվականի 9 ամիսների համար ներկայացրած «Բյուջետային ծախսերի և բյուջետային պարտքերի» հաշվետվությունում փաստացի կատարված ծախսը պակաս է ցույց տվել 120,187.20 հազ. դրամով:

Հաշվեքննության արդյունքում Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող Մ6 Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման միջպետական նշանակության ճանապարհի կառուցում և հիմնանորոգում ծրագրի փաստացի ծախսը կազմել է 2,263,855.90 հազ. դրամ, սակայն նախարարության կողմից ներկայացրած «Բյուջետային ծախսերի և բյուջետային պարտքերի» հաշվետվությունում, որպես փաստացի կատարված ծախս, նշել է 2,143,668.70 հազ. դրամ, կամ 2020 թվականի ինն ամիսների փաստացի ծախսը պակաս է ցույց տրվել 120,187.2 հազ. դրամով:

Հաշվեքննվող օբյեկտի կողմից արձագանք չի եղել

1.3. Հիմնական ընդհանուր հանրակրթություն

1.3.1. Հիմնական ընդհանուր հանրակրթության ծրագրով գիտելիքների գնահատման համար նախատեսվել է 13 բալային համակարգ ՀՀ –ում գործող գիտելիքների գնահատման 10 բալային համակարգի փոխարեն:

«Հիմնական ընդհանուր հանրակրթություն» ծրագրի համար ՀՀ պետական բյուջեից 2020 թվականի ինն ամիսների ճշտված պլանով նախատեսվել է հատկացնել 30,954,769.3 հազ. դրամ /1-ին կիսամյակ՝ 5,027,356.60 հազ. դրամ/, դրամարկղային ծախսը կազմել է 29,807,700.90 հազ. դրամ /1-ին՝ կիսամյակ 4,895,244.10 հազ. դրամ/, փաստացի ծախսը՝ 29,807,700.90 հազ. դրամ:

ՀՀ 2020 թվականի ինն ամիսների պետական բյուջեի ելքային ծրագրերի և միջոցառումների գծով արդյունքային /կատարողական/ ցուցանիշների կատարման վերաբերյալ հավելվածի համաձայն սովորողների թիվը փաստացի կազմել է 169,715 աշակերտ՝ սահմանված 171,406 աշակերտի փոխարեն: Տարբերությունը կազմել է 1691 աշակերտ՝ 1,147,068.40 հազ. դրամ ծախսով:

Սովորողների միջին գնահատականը գիտելիքների ստուգման արդյունքում տարեկան ճշտված պլանով և 2020 թվականի ինն ամիսներին նախատեսվել է 13 բալ, փաստացի սովորողների միջին գնահատականը կազմել է 8 բալ: Անհրաժեշտ է նշել, որ ՀՀ-ում և Երևան քաղաքում գործում է գիտելիքների գնահատման 10 բալային համակարգ:

Հաշվեքննվող օբյեկտի կողմից արձագանք չի եղել

1.4. Երևան քաղաքի փողոցների արտաքին լուսավորության ծառայություններ

1.4.1. ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության և Երևանի քաղաքապետարանի միջև կնքված սուբվենցիայի տրամադրման պայմանագրով նախատեսված, սուբվենցիաների գումարների օգտագործման նկատմամբ նախնական փաստաթղթային հսկողություն չի իրականացվել:

«Երևան քաղաքի փողոցների արտաքին լուսավորության ծառայություններ» մատուցելու համար ՀՀ պետական բյուջեից 2020 թվականին ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը տարեկան ճշտված պլանով նախատեսվել է հատկացնել 2,124,862.30 հազ. դրամ սուբվենցիա, իսկ 2020 թվականի ինն ամիսների համար 1,455,880.70 հազ. դրամ /1-ին կիսամյակ՝ 898,390.70 հազ. դրամ/, ֆինանսավորումը, դրամարկղային և փաստացի ծախսը կազմել են 1,455,880.70 հազ. դրամ /1-ին կիսամյակ՝ 898,390.70 հազ. դրամ/:

«Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» ՀՀ կառավարության 26.12.2019 թվականի թիվ 1919-Ն որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ «Երևան քաղաքի փողոցների արտաքին լուսավորության ծառայություններ» ծրագրի գծով ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը վերապահված իրավունքները փոխանցվել են Երևանի քաղաքապետարանին:

Կնքված պայմանագրի 2.3.4 կետի համաձայն՝ քաղաքապետարանը պարտավոր էր հատկացվող սուբվենցիայի շրջանակներում քաղաքապետարանի և ծրագիրն իրականացնող համապատասխան սուբյեկտների հետ պայմանագրեր կնքելիս այդ պայմանագրերի պատճենները՝ 15-օրյա ժամկետում, իսկ 2.3.5 կետի համաձայն՝ նպատակային ծրագրերի /սուբվենցիաների/ գծով նախատեսված բյուջետային միջոցների տնօրինման և դրա շրջանակներում ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի կատարման մասին հաշվետվությունները և կատարված աշխատանքների հանձնման-ընդունման արձանագրության պատճենները ներկայացնել նախարարություն, սակայն քաղաքապետարանի կողմից նախարարություն ոչ մի փաստաթուղթ չի ներկայացվել:

Անհրաժեշտ է նշել, որ Հաշվեքննիչ պալատի պահանջը վերը նշված փաստաթղթերի պատճենների տրամադրման վերաբերյալ նույնպես մնացել է անպատասխան:

«ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» ՀՀ կառավարության 26.12.2019 թվականի թիվ 1919-Ն որոշման 10-րդ կետի 2-րդ մասի համաձայն՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության և Երևանի քաղաքապետարանի միջև կնքված սուբվենցիայի տրամադրման պայմանագրով նախատեսված, սուբվենցիաների գումարների օգտագործման նկատմամբ Նախարարության

կողմից պայմանագրի 3.1 կետով սահմանված՝ պայմանագրի 2.3.4 և 2.3.5 կետերում նշված փաստաթղթերը ստանալու միջոցով, նախնական փաստաթղթային հսկողություն չի իրականացվել:

Հաշվեքննվող օբյեկտի կողմից արձագանք չի եղել

1.5. Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող Գյումրու քաղաքային ճանապարհների ծրագիր

1.5.1. «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի 2020 թվականի ինն ամիսների ճշտված պլանով Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող Գյումրու քաղաքային ճանապարհների ծրագրով հունվար-սեպտեմբեր ամիսներին նախատեսված աշխատանքները իրականացվել է նախատեսվածից պակաս չափով:

«Գյումրու քաղաքային ճանապարհների ծրագրի» համար ՀՀ պետական բյուջեից 2020 թվականի տարեկան ճշտված պլանով նախատեսվել է հատկացնել 6,552,975.60 հազ. դրամ, 2020 թվականի ինն ամիսների համար 5,197,793.30 հազ. դրամ /1-ին կիսամյակ՝ 4,172,086.10 հազ. դրամ/, դրամարկղային և փաստացի ծախսը կազմել է 1,358,827.00 հազ. դրամ /1-ին կիսամյակ՝ 707,227.0 հազ. դրամ/:

«Հայաստանի Հանրապետության 2020 թվականի ինն ամիսների պետական բյուջեի ելքային ծրագրերի և միջոցառումների գծով արդյունքային (կատարողական) ցուցանիշների կատարման վերաբերյալ» հաշվետվության համաձայն՝ նախատեսվել է իրականացնել.

- Գյումրի քաղաքի 17 փողոցների (միջինը 9.5մ լայնությամբ և 16.75 կմ. երկարությամբ) հիմնանորոգում, փաստացի իրականացվել է 8 փողոցների հիմնանորոգում, պակաս է կատարվել 9-ով:
- Գյումրի քաղաքի հարակից մայրերով (միջինում 4մ լայնությամբ) 17 հատ փողոցների հիմնանորոգում, փաստացի իրականացվել է 8 հարակից մայրերով փողոցների հիմնանորոգում, պակաս է կատարվել 9-ով:
- Գյումրի քաղաքի փողոցների անձրևաջրերի հեռացման համակարգի 9,492 գծ/գմ հիմնանորոգում, փաստացի իրականացվել է 9195 գծ/գմ աշխատանքներ, պակաս է կատարվել 297գծ/գմ:
- Գյումրի քաղաքի լուսավորության համակարգի 759 լուսակետ հենասյունով հիմնանորոգում, փաստացի իրականացվել է 536 հատ, պակաս է իրականացվել 223 հատով:

Հաշվեքննվող օբյեկտի կողմից արձագանք չի եղել

1.6. Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող Գյումրու քաղաքային ճանապարհների դրամաշնորհային ծրագիր (Տրանշ Ա, Բ)

1.6.1. «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի 2020 թվականի ինն ամիսների ճշտված պլանով Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող Գյումրու քաղաքային ճանապարհների դրամաշնորհային ծրագրով (Տրանշ Ա, Բ) հունվար-սեպտեմբեր ամիսներին նախատեսված աշխատանքները իրականացվել է նախատեսվածից պակաս չափով:

«Գյումրու քաղաքային ճանապարհների դրամաշնորհային ծրագրի» (Տրանշ Ա, Բ) համար ՀՀ պետական բյուջեից 2020 թվականին տարեկան ճշտված պլանով նախատեսվել է հատկացնել 2,263,116.60 հազ. դրամ, 2020 թվականի ինն ամիսների համար ճշտված պլանով նախատեսվել է հատկացնել 1,810,493.40 հազ. դրամ (1-ին կիսամյակ՝ 1,357,870.00 հազ. դրամ), դրամարկղային ծախսը կազմել է 574,390.50 հազ. դրամ /1-ին կիսամյակ՝ 353,354.00 հազ. դրամ/, փաստացի ծախսը՝ 574,390.50 հազ. դրամ /1-ին կիսամյակ՝ 72,726.00 հազ. դրամ/:

«ՀՀ 2020 թվականի ինն ամիսների պետական բյուջեի ելքային ծրագրերի և միջոցառումների գծով արդյունքային (կատարողական) ցուցանիշների կատարման վերաբերյալ» հաշվետվության համաձայն՝ հունվար-սեպտեմբեր ամիսներին նախատեսվել է իրականացնել.

- Գյումրի քաղաքի 9 փողոցների (միջինը 9.5մ լայնությամբ և 8.75 կմ. երկարությամբ) հիմնանորոգում, փաստացի իրականացվել է 4 փողոցների հիմնանորոգում, պակաս է կատարվել 5-ով:
- Գյումրի քաղաքի հարակից մայթերով (միջինում 4մ լայնությամբ) 9 փողոցների հիմնանորոգում, փաստացի իրականացվել է 4 փողոցների հիմնանորոգում, պակաս է կատարվել 5-ով:
- Գյումրի քաղաքի փողոցների անձրևաջրերի հեռացման և լուսավորության համակարգի հիմնանորոգում՝ լուսակետ հենասյունով աշխատանքներ չի նախատեսվել և կատարվել:

Հաշվեքննվող օբյեկտի կողմից արձագանք չի եղել

1.7. Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող քաղաքային ենթակառուցվածքների և քաղաքի կայուն զարգացման ներդրումային երկրորդ ծրագրի շրջանակներում ճանապարհային շինարարություն

1.7.1. «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի 2020 թվականի ինն ամիսների ճշտված պլանով Ասիական զարգացման բանկի աջակցությամբ

իրականացվող քաղաքային ենթակառուցվածքների և քաղաքի կայուն զարգացման ներդրումային երկրորդ ծրագրի շրջանակներում ճանապարհային շինարարություն ծրագրով հունվար-սեպտեմբեր ամիսներին նախատեսված աշխատանքները իրականացվել է նախատեսվածից պակաս չափով:

«Քաղաքային ենթակառուցվածքների և քաղաքի կայուն զարգացման ներդրումային երկրորդ ծրագրի» իրականացման համար 2020 թվականին ՀՀ պետական բյուջեից ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը տարեկան ճշտված պլանով նախատեսվել է հատկացնել 9,233,794.80 հազ. դրամ: 2020թ. ինն ամիսների ճշտված պլանով նախատեսվել է հատկացնել 8,025,968.70 հազ. դրամ /1-ին կիսամյակ՝ 4,574,016.00 հազ. դրամ/, դրամարկղային ծախսը կազմել է 2,286,429.40 հազ. դրամ /1-ին կիսամյակ՝ 1,160,216.00 հազ. դրամ/, փաստացի ծախսը՝ 3,515,494.20 հազ. դրամ /1-ին կիսամյակ՝ 2,284,612.00 հազ. դրամ/:

«Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին «ՀՀ կառավարության 26.12.2019 թվականի թիվ 1919-Ն որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ «Քաղաքային ենթակառուցվածքների և քաղաքի կայուն զարգացման ներդրումային երկրորդ» ծրագրի գծով ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը վերապահված իրավունքները փոխանցվել են Երևանի քաղաքապետարանին:

Հայաստանի Հանրապետության 2020 թվականի ինն ամիսների պետական բյուջեի ելքային ծրագրերի և միջոցառումների գծով արդյունքային /կատարողական/ ցուցանիշների կատարման վերաբերյալ հավելվածի համաձայն՝ 2020 թվականի ճշտված պլանի համաձայն նախատեսվել է իրականացվել է «Բաբաջանյան-Աշտարակի խճուղի» 9.4 կմ երկարությամբ և 24 մ միջին լայնությամբ նոր ճանապարհահատվածի ամբողջ ծավալի 20 տոկոսի չափով, սակայն փոխարեն իրականացվել է 7 տոկոսի աշխատանքներ:

Հաշվեքննվող օբյեկտի կողմից արձագանք չի եղել

II. ԽԵՂԱԹՅՈՒՐՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ

1049-11001 Միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների պահպանման և անվտանգ երթևեկության ծառայությունների ծրագիր.

1. ՀՀ կառավարության 13.02.2014թ. թիվ 265-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհների ցանկի որոշ ճանապարհների դասակարգումը ըստ նշանակության չի համապատասխանում «Ավտոմոբիլային ճանապարհների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 6-րդ, 7-րդ, 8-րդ և 9-րդ կետերով սահմանված պահանջներին, որի հետևանքով ծառայությունների մատուցման համար կապալառուներին վճարվել է ավել գումարներ:

Ծրագիրը ներառել է միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընթացիկ ձմեռային և ընթացիկ ամառային պահպանման, պարբերական պահպանման (միջին նորոգման), նշագծման, մետաղական արգելափակոցների պահպանման և վնասված հատվածների վերականգնման, արհեստական կառույցների պահպանման և շահագործման աշխատանքները:

Ավտոճանապարհների ընթացիկ ձմեռային և ընթացիկ ամառային պահպանման աշխատանքներն իրականացնվել է 40 տարածաշրջանների (լուտերի) ավտոճանապարհների պահպանման համար գործող պայանագրերի շրջանակներում կնքված 33 համաձայնագրերի հիման վրա:

Ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման համար 2020 թվականի պետական բյուջեի տարեկան ճշտված պլանով նախատեսվել է հատկացնել 10,572,749.30 հազ. դրամ, 2020 թվականի 9 ամսվա ճշտված պլանով 8,806,835.00 հազ. դրամ /1-ին կիսամյակ՝ 4,121,383.00 հազ. դրամ/, դրամարկղային և փաստացի ծախսը կազմել է 6,496,005.40 հազ. դրամ /1-ին կիսամյակ՝ 2,880,228.00 հազ. դրամ/:

ՀՀ կառավարության 13.02.2014թ. թիվ 265-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհների ցանկի որոշ ճանապարհների դասակարգումը ըստ նշանակության չի համապատասխանում «Ավտոմոբիլային ճանապարհների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 6-րդ, 7-րդ, 8-րդ և 9-րդ կետերով սահմանված պահանջներին:

«Ավտոմոբիլային ճանապարհների մասին» ՀՀ օրենքի ՀՀ օրենքի վերը նշված կետերի համաձայն միջպետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհներ են հանդիսանում այն ճանապարհները, որոնք կապում են Հայաստանի Հանրապետության ճանապարհային ցանցը այլ պետությունների ավտոմոբիլային

ճանապարհների ցանցին և ապահովում են միջազգային տրանսպորտային հաղորդակցություն, ինչպես նաև խոշոր բնակավայրերի, օդանավակայանների, պատմական հուշարձանների, լեռնանցքների մոտեցումներն ու շրջանցները և տրանսպորտային հանգույցները, որոնք չունեն առանձին պայմանանիշ:

Հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհներ են հանդիսանում այն ճանապարհները, որոնք կապում են հանրապետության քաղաքները մայրաքաղաքին և միմյանց, մշակույթային, հոգևոր կենտրոնների և միջպետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների հետ, խոշոր բնակավայրերի, օդանավակայանների, պատմական հուշարձանների, լեռնանցքների մոտեցումներն ու շրջանցները, ինչպես նաև՝ տրանսպորտային հանգույցները որոնք չունեն առանձին պայմանանիշ, իսկ մարզային (տեղական) նշանակության ավտոմոբիլային ճանապարհները կապում են հանրապետության գյուղական բնակավայրերը միմյանց, այլ քաղաքների, հանրապետական և միջպետական նշանակության ճանապարհների հետ:

➤ **Որպես միջպետական նշանակության ավտոճանապարհներ դասակարգված ավտոճանապարհներից**

➤ 387 կմ ավտոճանապարհները հանդիսանում են հանրապետական նշանակության ճանապարհներ (կապում են ՀՀ ճանապարհային ցանցը այլ պետությունների ավտոմոբիլային ճանապարհների ցանցին, սակայն չեն ապահովում միջազգային տրանսպորտային հաղորդակցություն, հանրապետության քաղաքները մայրաքաղաքին, միմյանց և միջպետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհներին: Այս ավտոճանապարհների պահպանման աշխատանքների համար 9 ամսվա կատարողականներով հաշվարկված գները գերազանցում են որպես հանրապետական նշանակության նույն վիճակի և պահպանման մակարդակի ավտոճանապարհների համար կապալառու ընկերությունների առաջարկած պայմանագրային գները 75,912.80 հազ. դրամով, որից՝ 1-ին կիսամյակում 55,576.40 հազ. դրամ (հավելված 3 և հավելված 4):

➤ 167,8 կմ ավտոճանապարհներ հանդիսանում են տեղական նշանակության ճանապարհներ (կապում են հանրապետության գյուղական բնակավայրերը միմյանց, այլ քաղաքների, հանրապետական և միջպետական նշանակության ճանապարհներին): Որպես միջպետական նշանակության ճանապարհներ՝ 167.8 կմ ավտոճանապարհների պահպանության համար հաշվարկվել է 191,881.90 հազ. դրամ կատարողական, հաշվարկված գները գերազանցում են որպես տեղական նշանակության նույն վիճակի և պահպանման մակարդակի ավտոճանապարհների համար նույն կապալառու ընկերությունների առաջարկած պայմանագրային գները 60,485.00 հազ. դրամով, որից՝ 1-ին կիսամյակում 37,982.30 հազ. դրամով (հավելված 5):

➤ 34,5 կմ երկարությամբ ճանապարհներ հանդիսանում են դաշտամիջյան ճանապարհներ, որոնց որպես միջպետական նշանակության ավտոճանապարհների պահպանման համար 9 ամսվա ընթացքում վճարվել է 14,337.60 հազ. դրամ /1-ին կիսամյակում 10,594.70 հազ. դրամ/: ՀՀ օրանսդրությամբ նշված ճանապարհների համար պահպանման աշխատանքներ չի նախատեսվում և չի իրականացվում (հավելված 6):

✓ **Որպես հանրապետական նշանակության ավտոճանապարհներ դասակարգված ավտոճանապարհներից**

➤ 569,3 կմ ճանապարհները հանդիսանում են մարզային նշանակության ավտոճանապարհներ: Նշվածներից 1-ին եռամսյակում պահպանություն են իրականացվել 492,1 կմ, իսկ 2-րդ և 3-րդ եռամսյակներում՝ 440,6 կմ երկարությամբ ճանապարհահատվածների վրա, որոնց պահպանության համար 2020թ. 9 ամսվա կատարողականներով հաշվարկվել է 578,184.90 հազ. դրամ /1-ին կիսամյակում 372,168.90 հազ. դրամ/ (հավելված 7):

➤ 58,7 կմ-ն դաշտամիջյան ճանապարհներ են: Այս ճանապարհներից 1-ին եռամսյակում պահպանման է հանձնվել 37,1 կմ երկարությամբ ճանապարհահատվածներ, իսկ 2-րդ և 3-րդ եռամսյակում 28,7 կմ: Նշված ճանապարհահատվածների 9 ամսվա պահպանության համար կատարողականներով հաշվարկվել է 37,304.00 հազ. դրամ /1-ին կիսամյակում 23,522.50 հազ. դրամ/ (հավելված 8):

➤ 7.6 կմ-ն Հրազդան քաղաքի փողոց է, որի պահպանության համար 2020թ. 9 ամսվա կատարողականներով հաշվարկվել է 8,204.90 հազ. դրամ, որից՝ 1-ին կիսամյակում 5,334.90 հազ. դրամ:

➤ 24.4 կմ-ը միջպետական նշանակության ավտոճանապարհ է:

➤ ՀՀ կառավարության 13.02.2014թ.-ին թիվ 265-Ն որոշման 4-րդ կետի 2)-րդ մասով սահմանվել է, որ Գյումրի, Վանաձոր, Կապան, Իջևան, Վաղարշապատ և Արմավիր քաղաքների տարածքներում գտնվող՝ Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների մաս հանդիսացող հատվածների միայն երթևեկելի մասի ծածկի ընթացիկ նորոգման և ձմեռային պահպանության աշխատանքներն են իրականացվում Հայաստանի Հանրապետության տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության կողմից: **Գյումրու, Վանաձոր և Վաղարշապատ քաղաքների** տարածքներում գտնվող՝ Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների մաս հանդիսացող հատվածները չեն ներառվել 2020թ. ձմեռային և ընթացիկ պահպանման աշխատանքների համաձայնագրերում, իսկ **Կապան, Իջևան և**

Արմավիր քաղաքների տարածքներում գտնվող 21.5 կմ ընդհանուր երկարությամբ ճանապարհները ընդգրկվել են ձմեռային և ընթացիկ պահպանման համաձայնագրերում: Կարգի համաձայն՝ ճանապարհների ընթացիկ նորոգման և ձմեռային պահպանության աշխատանքները, բացի երթևեկելի մասը, ներառում են նաև հողային պաստառը և օտարման շերտը, արհեստական կառուցվածքները և կահավորանքը: Համաձայն նույն Կարգի աղյուսակ 4-ի՝ ընթացիկ ամառային պահպանման ցուցանիշների ապահովման ընդհանուր արժեքում ծածկը (երթևեկելի մասի) կազմում է ընդամենը 55%-ը, իսկ ընթացիկ ձմեռային պահպանման ժամանակ՝ 70%-ը: Ինչպես նաև, հետևաբար՝ նշված ճանապարհների ամառային պահպանման աշխատանքների համար պետք է հաշվարկվեր պայմանագրային գնի 55%-ը, իսկ ձմեռայինի դեպքում՝ 70%-ը ինչը չի կատարվել և ինչի արդյունքում 2020թ. 9 ամսվա ընթացքում ավել է հաշվարկվել 11,249.90 հազ. դրամ /1-ին կիսամյակում՝ 6,982.00 հազ. դրամ/ (հավելված 2) :

III. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՄԲ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԱՅԼ ՓԱՍՏԵՐ

1049-11001 Միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների պահպանման և անվտանգ երթևեկության ծառայությունների ծրագիրը ներառել է միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընթացիկ ծմեռային և ընթացիկ ամառային պահպանման, պարբերական պահպանման (միջին նորոգման), նշագծման, մետաղական արգելափակոցների պահպանման և վնասված հատվածների վերականգնման, արհեստական կառույցների պահպանման և շահագործման աշխատանքները:

Ծրագրի շրջանակներում 2020թ.-ի կնքված համաձայնագրերով 1 քմ նշագծման աշխատանքների պայմանագրային գները չեն փոփոխվել, սակայն 1 քմ նշագծման աշխատանքների արժեքները, ըստ մարզերի, էականորեն տարբերվում են: Այսպես, եթե Արագածոտնի, Արարատի, Արմավիրի և Կոտայքի մարզերում նշագծման աշխատանքների միավոր արժեքը (1 քմ) կազմում է 0.88 հազ. դրամ, ապա մնացած մարզերում 1.145-1.150 հազ. դրամ, կամ 30.7 %-ով ավելի:

1049-21004 Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող Մ6 Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման միջպետական նշանակության ճանապարհի կառուցում և հիմնանորոգում ծրագիր շրջանակում

Խորհրդատվական ծառայությունների մատուցման թիվ ADB/M-6/CS/QCBS/02- պայմանագրի «Սոցիալական անվտանգության աջակցություն» ծառայությունների մատուցման համար 13.09.2017 թվականին 15 ամիս ժամկետով՝ մինչև 13.12.2018թ., 198,294.9 հազ. դրամ արժեքով պայմանագիր է կնքել Տրանսպորտային ծրագրերի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի և «ԱԼՏԱ-ՎԻՊ» ՍՊԸ-ի միջև, որի դիմաց պայմանագրի կնքման պահից մինչև 01.01.2020 թվականը մատուցվել և դրա դիմաց վճարվել է 150.4 հազ. ԱՄՆ դոլար:

06.02.2019 թվականին կնքվել է համաձայնագիր՝ պայմանագրում փոփոխություններ կատարելու վերաբերյալ և պայմանագրի ժամկետի ավարտից 44 օր հետո միայն պայմանագրում կատարել են փոփոխություն և պայմանագրի ժամկետի ավարտը երկարաձգվել մինչև 2019 թվականի օգոստոսի 13-ը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Խորհրդատուն հողերի վերաբերյալ անավարտ գործերի պատճառով չի կարողանա ավարտել ծառայությունների մատուցման իր աշխատանքները նախքան գործունեության ժամկետի ավարտը, կնքված պայմանագրի ժամկետի ավարտից վեց ամիս հետո՝ 2020 թվականի փետրվարին կնքված համաձայնագրի արդյունքում պայմանագրի ժամկետի ավարտը երկարաձգվել է մինչև 2020 թվականի օգոստոսի 13-ը: Պայմանագրի ավարտի երկարացված ժամկետում նույնպես նախատեսված աշխատանքները

խորհրդատուի կողմից չի կատարվել: 2020 թվականի դեկտեմբերի 3-ին միայն, պայմանագրի ժամկետի ավարտից 112 օր հետո, պայմանագրում կատարել են փոփոխություն և պայմանագրի ժամկետի ավարտը երկարաձգվել մինչև 2021 թվականի մայիսի 31-ը:

«ՀԵՏՀՍԿՈՂԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ»

ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԽԵՂԱԹՅՈՒՐՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱՑՄԱՆ, ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆԸ ՎԵՐԱԲԵՐՈՂ ԱՅԼ ԳՐԱՎՈՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՁԵՎԱԶԱՓ

№	Առաջարկություն	Ընդունելի է/ Ընդունելի չէ	Կատա րված է/ Ընթաց քում է	Հիմնա վորում ներ
1.	ՀՀ կառավարության 13.02.2014 թվականի թիվ 265-Ն որոշմամբ հաստատված ավտոմոբիլային ճանապարհների անվանացանկում՝ ըստ նշանակության դասակարգված ՀՀ ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհների դասակարգումը համապատասխանեցնել «Ավտոմոբիլային ճանապարհների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 6-րդ, 7-րդ, 8-րդ և 9-րդ մասերով սահմանված պահանջներին:			
2.	«ՀՀ միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների պահպանում և անվտանգ երթևեկության ծառայություններ» մատուցելու համար կապալառու կազմակերպությունների հետ համաձայնագրերը կնքել տարվա սկզբից, որպեսզի աշխատանքները իրականացվեն պահպանման մակարդակների չափանիշներին համապատասխան:			

№	Անհամապատասխանություն/ խեղաթյուրում	Վերացվա ծ է/ չէ	Հիմնավորո ւմներ
---	--	-----------------------	--------------------

		վերացված չէ/ ընթացքում է	
1.	2020 թվականի հունվար և փետրվար ամիսներին պահպանում իրականացնող ընկերությունները չունենալով սահմանված պահպանման մակարդակների չափանիշներ, պահպանում են իրականացրել չիմանալով թե, որ ճանապարհների և որ ճանապարհահատվածների վրա, ինչ մակարդակի պահպանություն պետք է իրականացնեն		
2.	ՀՀ կառավարության 13.02.2014 թվականի թիվ 265-Ն որոշմամբ՝ ըստ նշանակության դասակարգված ՀՀ ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհներից, որոշ ճանապարհների դասակարգումը չի համապատասխանում “Ավտոմոբիլային ճանապարհների մասին” ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 6-րդ, 7-րդ, 8-րդ և 9-րդ կետերով սահմանված պահանջներին, որի հետևանքով ծառայությունների մատուցման համար կապալառուներին վճարվել է 785,677.30 հազ. դրամ ավելի գումար:		
3.	Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող Մ6 Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման միջպետական նշանակության ճանապարհի կառուցում և հիմնանորոգում ծրագրով 2020 թվականի 9 ամիսների խորհրդատվական ծառայությունների համար տրամադրված տեեկատվությունը 1-ին կիսամյակի վերաբերյալ, չի համապատասխանում 2020թվականի առաջին կիսայակում նույն աշխատանքների վերաբերյալ ներկայացրած տեղեկատվությանը:		
4.	2020 թվականի 9 ամիսների ընթացքում նախարարության կողմից պակաս է իրականացվել ՀՀ պետական բյուջեի ճշտված պլանով նախատեսված ճանապարհների ձմեռային պահպանման և ընթացիկ ամառային պահպանման աշխատանքները համապատասխանաբար՝ 140.7 կմ-ով և 113.3 կմ-ով:		

5.	Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող Մ6 Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման միջպետական նշանակության ճանապարհի կառուցում և հիմնանորոգում ծրագրի փաստացի ծախսը 2020 թ-ի 9 ամիսներին կազմել է 2,263,855.90 հազ. դրամ, սակայն նախարարության կողմից ներկայացրած «Բյուջետային ծախսերի և բյուջետային պարտքերի» հաշվետվությունում, որպես փաստացի կատարված ծախս, նշել է 2,143,668.70 հազ. դրամ, կամ փաստացի ծախսը պակաս է ցույց տրվել 120,187.2 հազ. դրամով:		
6.	“Հիմնական ընդհանուր հանրակրթություն” ծրագրի համար սովորողների միջին գնահատականը տարեկան ճշտված պլանով և հաշվետու ժամանակահատվածում նախատեսվել է ապահովել 13 բալ, այն դեպքում երբ ՀՀ-ում և Երևան քաղաքում գործում է գիտելիքների գնահատման 10 բալային համակարգ:		
7.	Հաշվետու ժամանակաշրջանի ճշտված պլանով Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող Մ6 Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման միջպետական նշանակության ճանապարհի կառուցում և հիմնանորոգում ծրագրով նախատեսվել է կատարել 11,231,447.00 հազ. դրամի աշխատանքներ, փաստացի կատարվել է 2,143,668.70 հազ. դրամի աշխատանքներ, կամ կատարվել է նախատեսված աշխատանքներից պակաս 9,087,779.00 հազ. դրամով:		
8.	“ՀՀ 2020թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին” ՀՀ կառավարության 26.12.2019 թվականի թիվ 1919-Ն որոշման 10-րդ կետի 2-րդ մասի համաձայն ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության և Երևանի քաղաքապետարանի միջև կնքված սուբվենցիայի տրամադրման պայմանագրով նախատեսված, սուբվենցիաների գումարների օգտագործման նկատմամբ Նախարարության կողմից պայմանագրի 3.1 կետով սահմանված նախնական փաստաթղթային հսկողություն, պայմանագրի 2.3.4 և 2.3.5 կետերում նշված փաստաթղթերի հիման վրա չի իրականացրել:		
9.	ՀՀ ընդհանուր օգտագործման միջպետական և հանրառապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների վրա գտնվող մետաղական		

	արգելափակոցների պահպանման և վնասված հատվածների վերականգնման ծրագրով, 2020 թվականի 9 ամսվա համար նախատեսված աշխատանքները իրականացվել է ծրագրով նախատեսված չափից 29,871.50 հազ. դրամով պակաս:		
10.	ՀՀ ընդհանուր օգտագործման միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների վրա 2020թվականի 9 ամիսների ընթացքում իրականացվել է ծրագրով նախատեսվածից 29,199.90 հազ. դրամով պակաս նշագծման աշխատանքներ :		

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ կառավարությանը՝

ՀՀ կառավարության 13.02.2014թ.-ի թիվ 265-Ն որոշմամբ հաստատված ավտոմոբիլային ճանապարհների անվանացանկում՝ ըստ նշանակության դասակարգված ՀՀ ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհների դասակարգումը համապատասխանեցնել «Ավտոմոբիլային ճանապարհների մասին» ՀՀ օրենքի 3-րդ, հոդվածի 6-րդ, 7-րդ, 8-րդ և 9-րդ կետերով սահմանված պահանջներին:

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը՝

«ՀՀ միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների պահպանում և անվտանգ երթևեկության ծառայություններ» մատուցելու համար կապալառու կազմակերպությունների հետ համաձայնագրերը կնքել տարվա սկզբից, որպեսզի աշխատանքները իրականացվեն պահպանման մակարդակների չափանիշներին համապատասխան:

Հաշվեքննության ընթացքում ձեռք ենք բերել բավարար տեղեկատվություն հաշվեքննության իրականացման համար:

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

հավելված 1

